

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՀՀ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆԸ

22.04.2022 18:39



ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը ներկա է գտնվել ՀՀ Դատավորների միության 25-ամյակին նվիրված միջոցառմանը:

Փաստաբանների պալատի նախագահը հանդես է եկել ելույթով.

« Հարգելի գործընկերներ,

ուրախ եմ ներկա գտնվելու Հայաստանի Հանրապետության դատավորների միության 25-ամյակին նվիրված հանդիսավոր միջոցառմանը:

Ցանկանում եմ շնորհավորել Ձեզ այս նշանակալից օրվա կապակցությամբ:

Անկասկած Հայաստանի Հանրապետությունում անկախ դատական համակարգի ձևավորման և զարգացման հարցում Հայաստանի Հանրապետության դատավորների միությունը էական դերակատարում է ունեցել:

Դատավորների միության առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն հանդիսանում է բացառիկ հարթակ, որտեղ դատավորները պայմանավորված իրենց կարգավիճակով հնարավորություն են ստանում մասնակցելու հասարակական գործընթացներին:

Հատուկ ուշադրության է արժանի միության գիտական հենքը հանդիսացող «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիրը: Այս պարբերականը իրավաբանական հանրությունում իր գործունեության արդյունավետությամբ պայմանավորված վաստակել է իրավունքի արդի հարցերը լուսաբանող ժամանակակից և վստահելի գիտական աղբյուրի համբավ:

Դատավորների միության բացառիկության տեսանկյունից հատուկ ուշադրության է արժանի դատավորների իրավունքների, ազատությունների, պատվի և արժանապատվության պաշտպանության, ինչպես նաև նրանց անվտանգության ապահովման ուղղված կանոնադրական առաքելությունը:

Կարծում եմ, որ ժամանակակից իրողությունների պայմաններում տվյալ առաքելության իրականացումը առավել կարևոր է, քան երբևէ:

Ժողովրդավարական պետությունում չեն կարող

ընդունելի լինել, արդարադատության
իրականացման սահմանափակման կամ որևէ
ճնշման, միջամտության դրսևորումները:

Ցավոք սրտի, մենք ականատես եղանք նման
երևույթների: Հետևաբար, այս առումով ՀՀ
դատավորների միության անելիքները քիչ չեն:

Նշվածի հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի
ունենալ, որ իշխանությունների բաժանման
ժողովրդավարական սկզբունքի առանցքում դրված է
հենց դատական համակարգի անկախությունը, ինչը
ենթադրում է, որ այն պետք է ազատ լինի արտաքին
ճնշումներից և չպետք է կառավարվի մնացած
իշխանությունների՝ առավել ևս գործադիր
իշխանության կողմից:

Տեղին է հիշել. **«2կա անկախություն, եթե
դատական իշխանությունը տարանջատված չէ
օրենսդիր և գործադիր իշխանություններից»**
Մոնտեսքիոյի հայտնի միտքը:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ անկախ
դատական իշխանության բացակայության
պայմաններում չկա նաև իրավական պետություն,
իսկ առանց իրավական պետության գոյության,
հնարավոր չէ ապահովել անձի իրավունքների
իրացման և երաշխավորված պաշտպանության
իրական ու արդյունավետ կառուցակարգերը, քանի
որ հենց իրավական պետության ամրագրմամբ
պետությունը հավաստում է օրենքի նկատմամբ
իրավունքի գերակայությունը:

Ընդ որում, դատական իշխանության
անկախությունը հանդիսանում է մարդու
իրավունքների ճանաչման, պաշտպանության և
ապահովման երաշխիք:

Եվ չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի
Հանրապետությունը անցել է սահմանադրական և
դատաիրավական մի շարք բարեփոխումների միջով,
որոնք կոչված էին երաշխավորելու
հանրապետությունում դատական համակարգի
լիարժեք անկախությունը և կառուցելու
ժողովրդավարական զարգացած երկրներին բնորոշ և
միջազգային չափանիշներին համապատասխան
դատական համակարգ, կարծում եմ, դեռ
բավականին անելիքներ կան:

Գաղտնիք չէ, որ արդյունավետ դատական
իշխանության առաջնային շահառուն
փաստաբանությունն է, քանզի այն չի կարող
գոյություն ունենալ անկախ դատական իշխանության

բացակայության պայմաններում:

Հայաստանի Հանրապետության դատավորների միությանը մաղթում եմ բեղում գործունեություն, որպեսզի ապահովվի իր առջև ծառայած խնդիրների լուծումը, և շարունակի նպաստել անկախ, պաշտպանված, հեղինակավոր դատական իշխանությանը, դրա զարգացմանը և հանրային ընկալման մակարդակի բարձրացմանը:

Վստահ եմ, որ 25 տարվա նշանակալից փորձ ունեցող Հայաստանի Հանրապետության դատավորների միությունը նոր ուժով և եռանդով կշարունակի իրացնել իր առջև դրված նպատակները
»:

Հարգանքով`

Սիմոն Բաբայան

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ

```
BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```